ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/31

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե
Մասնակից՝ «Հրաչյա Վարդանյան» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱԳԿԿ-ՄԱԾՁԲ-19/22» ծածկագրով գնման ընթացակարգ, հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ ԱԳԿԿ-ՄԱԾՁԲ-19/22»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.01.2020թ.-ի թիվ 26/26-1/477-2020 գրությամբ «Հրաչյա Վարդանյան» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 13.01.2020թ.-ի թիվ ԳԳ//96-2020 գրության հիման վրա, 16.01.2020թ.-ին «Հրաչյա Վարդանյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի (Գ. Ներսիսյանի) 21.01.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ՍՑ-ՆԳ-2020/23 համարի ծածկագիրը, իսկ 27.01.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 10.02.2020թ.-ի թիվ 33-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ՍՑ-ՆԳ-2020/23 համարի ծածկագրով ընթացակարգի քննությունը 10.02.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

11.02.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/31 համարի ծածկագիրը և 18.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 18.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.02.2020թ.-ին:

2. ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեն 13.01.2020թ.-ի թիվ ԳԳ//96-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է, որ Կադաստրի կոմիտեի կողմից կազմակերպված «ՀՀ ԱԳԿԿ-ՄԱԾՁԲ-19/22» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում, ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված

«Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 16-րդ համաձայն՝ «Հրաչյա Վարդանյան» ՍՊԸ-ն ծանուցվել է ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Հրաչյա Վարդանյան» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Հրաչյա Վարդանյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 21.01.2020թ.-ին. գրությամբ դիմել է «Հրաչյա Վարդանյան» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.01.2020թ.-ի թիվ 26/26-1/477-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել նիստերին:

Մասնակիցը 23.01.2020թ.-ի թիվ 01 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության 16.01.2020թ. թիվ 26/26-1/477-2020 գրությամբ նախաձեռնված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Հրաչյա Վարդանյան» ՍՊԸ-ին ներառելու ընթացակարգ սկսելու մասին ծանուցման գրավոր հանձնարարականի, ներկայացնում ենք ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի հետ կնքված Հեղինակային հսկողության ծառայություններ մատուցելու մասին N ՀՀ ԱԳԿԿ-ՄԱԾՁԲ-19/22 պետական գնման պայմանագրով նախատեսված աշխատանքերի իրականացման գործընթացի մասին «Հրաչյա Վարդանյան» ՍՊԸ-ի գրավոր դիրքորոշումը:

Վերոհիշյալ պայմանագրի առարկան «Հրաչյա Վարդանյան» ՍՊԸ կողմից 01.11.2018թ. N ՀՀ ԱԳԿԿ-ՄԱԾՁԲ-19/21 պետական գնման պայմանագրով մշակված՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի տարածքի ընթացիկ վերանորոգման աշխատանքների նախագծով նախատեսված շինարարության իրականացման նկատմամբ հեղինակային հսկողությունն էր: Նշյալ հեղինակային հսկողությանը իրականացումն, ըստ գործող կարգի, իր մեջ ներառում էր շինաշխատանքների ընթացքում նախագծային լուծումների

փոփոխություններ և լրացումներ, ինչպես նաև ըստ պայանագրի նախատեսված ժամկետներին կամ Պատվիրատուի հրավերով այցելություններ կառուցվող օբյեկտ՝ աշխատանքների համապատասխանությունը Նախագծին ստուգելու և ծագած խնդիրներին լուծումներ առաջարկելու համար: ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից նախագծողի՝ «Հրաչյա Վարդանյան» ՍՊԸ հետ կապն իրականացրել է այդ նպատակի համար առանձնացված աշխատակիցը՝ Իրինա Մերդինյանը, որը նաև ապահովել է նախագծման և հսկողության հետ առնչվող տարբեր փաստաթղթերի վավերացման ընթացակարգը: «Հրաչյա Վարդանյան» ՍՊԸ կողմից ևս առանձնացվել է մասնագետ՝ Ձարեհ Ղարիբյանը, որը կատարել է հեղինակային հսկողության գործառույթները և հաշվետու է եղել ընկերության ղեկավարությանը: Հեղինակային հսկողության իրականացման պայմանագրային աշխատանքների գծագրական մասով իրականացվել են ծավալուն աշխատանքներ, քանի որ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի առաջադրանքով մշակված նախագծերը Երևանի քաղաքապետարանի պահանջով վերանախագծվել են: Մասնավորապես, հեղինակային հսկողության պայմանագիրը կնքվել է 23.03.2019թ., իսկ շինարարության թույլտվությունը ստացվել է 14.08.2019թ., ինչը նշանակում է, որ հսկողության համար հատկացված մոտ 9 ամսից շուրջ 5-ը ծախսվել է նախագծային փոփոխությունների վրա, ինչն ինքնին արդեն հեղինակային հսկողության իրականացման գործառույթն հաստատող փաստ է: Փոխադարձ գրագրության վերջին նմուշը, որն առնչվում է օբյեկտում կիրառված գների ճշտմանը, փոխանակվել է Պատվիրատուի հետ 2019թ. նոյեմբերի վերջին օրերին: Պետք է փաստել, որ հեղինակային հսկողության իրականացման ավարտական փուլում, հանձման-ընդունման ակտի ստորագրման մասին մեզ տեղեկացման կապը արդեն չէր աշխատում՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ղեկավարի հրաժարականի և ապա նոր ղեկավարության նշանակման և Իրինա Մերդինյանի՝ աշխատանքերին այլևս չհետևելու հանգամանքով պայմանավորված: ՀՀ ԱԳԿԿ-ՄԱՇՁԲ-19/22 պետական գնման պայմանագրով կատարողի պարտավորությունները արձանագրված են պայմանագրի բաժին 2-ում, ուր նաև 2.1.3 կետով սահմանված են պայմանգրի միակողմանի լուծման պայմանները: Ըստ նշված 2.1.3 կետի, կամ պետք է էականորեն խախտված լիներ պայմանագիրը, այսինքն մատուցված ծառայությունները չհամապատասխանեին պայմանագրի N1 հավելվածով սահմանված պահանջներին, կամ խախտվեր ծառայության մատուցման ժամկետը: Մատուցված ծառայությունները պայմանագրի N1 հավելվածին չհամապատասխանելու մասին որևէ

դիտողություն, պահանջ, դժգոհություն կամ այլ նկատառում հեղինակային հսկողության իրականացման աշխատանքների կատարման ողջ ընթացքում Պատվիրատուի կողմից «Հրաչյա Վարդանյան» ՍՊԸ-ին չեն ներկայացվել: Ոչ գրավոր, ոչ բանավոր: Համաձայն գործող կարգի, այն է՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության 28.10.1998թ. N 143 հրամանով հաստատված շինարարության հեղինակային հսկողության իրականացման հրահանգի 5-րդ կետի, հեղինակային հսկողությունն համարվում է ավարտված շինարության ավարտական ակտը սահմանված կարգով ձևակերպելուց հետո: Քանի որ շինարարական աշխատանքների ավարտի փաստագրական ձևակերպման, այն է ավարտական ակտի վավերացման մասին «Հրաչյա Վարդանյան» ՍՊԸ-ին տեղեկատվություն չի տրվել ուստի մենք չենք նախաձեռնել ընդունման-հանձման գործընթաց: Ընդունման-հանձման ակտի ներկայացման մասին ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեից մենք գրավոր կամ բանավոր ծանուցում չենք ստացել:

Հաշվի առնելով վերոհիշյալը, խնդրում եմ «Հրաչյա Վարդանյան» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2020/31 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Հրաչյա Վարդանյան» ՍՊԸ-ի միջև 29.03.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ԱԳԿԿ-ՄԱԾՁԲ-19/22» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Մասնակցին 30.12.2019թ.-ի ուղարկված թիվ ԳԳ/9890-19 պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Կադաստրի կոմիտեի և «Հրաչյա Վարդանյան» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի մարտի 29-ին կնքված թիվ «ՀՀ ԱԳԿԿ-ՄԱԾՁԲ-19/22» ծածկագրով պայմանագրի շրջանակներում մասնակիցը մինչև 2019 թվականի դեկտեմբերի 20-ը պետք է կատարեր պայմանագրով նախատեսված աշխատանքները, սակայն սահմանված ժամկետում դրանք չեն ներկայացվել:

Հիմք ընդունելով պայմանագրի 7.9 կետը՝ Կադաստրի կոմիտեն 2019 թվականի դեկտեմբերի 25-ին միակողմանի լուծում է թիվ «ՀՀ ԱԳԿԿ-ՄԱԾՁԲ-19/22» պայմանագիրը:

www.gnumner.am համացանցային կայքում 30.12.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը չի հրապարակվել «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.01.2020թ.-ի թիվ 26/26-1/477-2020 գրությամբ «Հրաչյա Վարդանյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի և «Հրաչյա Վարդանյան» ՍՊԸ-ի միջև 29.03.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԱԳԿԿ-ՄԱԾՁԲ-19/22» ծածկագրով պետական գնման պայմանագիրը ՀՀ անշարժ գույքի կադաստրի

կոմիտեն միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով Մասնակցի կողմից թույլ տված խախտումները, այն է՝ խախտվել է ծառայության մատուցման ժամկետը :

www.gnumner.am համացանցային կայքում 30.12.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը չի հրապարակվել «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:

Պայմանագրի 7.9 կետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի թիվ 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ

մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ կողմերի միջև կնքված թիվ «ՀՀ ԱԳԿԿ-ՄԱԾՁԲ-19/22» ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանիորեն լուծման մասին ծանուցումը Պատվիրատուի կողմից չի հրապարակվել տեղեկագրում՝ www.gnumner.am կայքի «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Պայմանագրի 7.9 կետի և Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի իմպերատիվ (պարտադիր) դրույթներով սահմանված պահանջը, որպիսի պայմաններում Պայմանագիր կնքած անձը չի կարող համարվել պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված (ծանուցումը ստացված), ըստ այդմ էլ պայմանագիրը չի կարող համարվել լուծված, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի դրութները, այն է՝ մատակարարման պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ:

Ուստի, նման պայմաններում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.01.2020թ.-ի թիվ 26/26-1/477-2020 գրությամբ «Հրաչյա Վարդանյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-LO-2020/31 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**